



Գիտա-հասարակական կոնֆերանս

«Ալեքսանդրապոլ»

մարտի 16-18, 2007 թ.

Գյումրի

Թ Ե Չ Ի Ս Ն Ե Ր Ի

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ ՈՒ

## Ցանկ

Կանաչ տարածքների դերը քաղաքային միջավայրի բարելավման գործում (Գյումրի քաղաքի օրինակով)	
Լ. Մարտիրոսյան.....	3
Գյումրու տարածքի սեյսմիկ ռիսկը	
Ս. Նազարեթյան, Լ. Սուվարյան, Շ. Սուվարյան.....	5
Զբաղվածության հիմնահարցերի արդիականությունը եւ արդյունաբերության զարգացման հնարավոր ուղղությունները Գյումրիում	
Ա. Բոյաջյան.....	7
Մշակութային տուրիզմ	
Ջ. Գրինվուդ.....	9
Գյումրու տեղական ինքնակառավարումը	
Վ. Հախվերդյան.....	11
Տիգրիկական դաստիարակությունը Ալեքսանդրապոլում	
Ռ. Պապոյան.....	14
Աշուղ Շերամը եւ Ալեքսանդրապոլի քաղաքային երգարվեստը	
Հ. Հարությունյան.....	17
Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոցը արդի հայ կերպարվեստում	
Լ. Աթանեսյան.....	18
Արդի էթնոհոգեբանական գործընթացները Շիրակի Մարզում	
Կ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան.....	19
Գյումրի քաղաքում պահպանված Մինաս Ավետիսյանի որմնանկարների ներկայիս վիճակը եւ ոչնչացումից փրկելու ուղիները	
Ս. Նազարեթյան, Ջ. Հովհաննիսյան, Հ. Կարապետյան.....	20
Ալեքսանդրապոլի աշուղական արվեստը եւ նրա ավանդույթների արդիականությունը	
Կ. Եղոյան.....	22

**Լ. Մ. Մարտիրոսյան, «Գեոֆոն» գիտական  
հասարակական կազմակերպություն:**

**ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ (ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Կանաչ տարածքները ժամանակակից քաղաքում ունեն մի քանի գործառնական նշանակություն, որոնցից առավել կարևոր են. սանիտարա-հիգիենիկ, ռեկրեացիոն, դեկորատիվ-գեղարվեստական և այլն:

Կանաչապատման հիմնական սկզբունքը բոլոր քաղաքներում, այդ թվում նաև Գյումրիում պետք է լինի հավասարաչափությունը և անընդհատությունը: Կանաչ տարածքների հիմնական ձևը զբոսայգիները, պուրակները, ինչպես նաև գազոններն են: Որոշ, առավել մեծ տարածք զբաղեցնող քաղաքներում, կազմակերպում են նաև այսպես կոչված զբոսանտառներ (лесопарк):

Քաղաքային բնակավայրերում կանաչ տարածքները էականորեն նպաստում են օդային ավազանի մաքրությանը: Միջին մեծության ծառը, 24 ժամվա ընթացքում վերականգնում է այնքան թթվածին, որն անհրաժեշտ է երեք մարդու շնչառության համար: Նկատի ունենալով այս ցուցանիշը մոտավորապես կարելի է հաշվել Գյումրու տարածքում մեկ օրվա ընթացքում մթնոլորտ արտազատված թթվածնի քանակությունը:

Մեկ արևոտ օրվա ընթացքում մեկ հեկտար անտառը կլանում է 220-280կգ ածխաթթու գազ, արտազատելով 180-200կգ թթվածին (Зарудин Г. П. 1986):

Քաղաքներում կարևոր նշանակություն ունեն նաև գազոնները: 1մ<sup>2</sup> գազոնի մակերեսից, մեկ ժամվա ընթացքում գոլորշանում է 200գ. ջուր, որը էապես նպաստում է օդի խոնավացմանը: Գյումրիում գազոնների մակերեսը, գրեթե հավասար է զրոյի:

Շոգ կլիմայական պայմաններում գտնվող քաղաքներում էական դեր են տանում զբոսայգիները: Ամբողջ քաղաքի տարածքում տեղի է ունենում ասֆալտապատ մակերեսների և շենքերի տանիքների ուժեղ տաքացում, որի պատճառով առաջանում են տաք վերընթաց հոսանքներ: Օդի հետ միաժամանակ վերև են բարձրանում փոշու մանր հատիկներ, որոնք երկար ժամանակ կարող են կախված մնալ օդում: Նույն պահին, քաղաքում գտնվող զբոսայգու վրա ջերմաստիճանը ավելի ցածր է, որի պատճառով այստեղ առաջանում են օդի վարընթաց հոսանքներ, որոնք իրենց հետ այստեղ են տեղափոխում օդում կախված փոշին: Ըստ հաշվարկների փշատերև անտառի մեկ հեկտարը տարվա ընթացքում կլանում է 40տ փոշի, իսկ լայնատերև տեսակներից կազմված անտառը՝ մոտ 100տ:

Խոշոր անտառային զանգվածները, որոնք ստեղծվում են մեծ քաղաքներում, երբեմն ունենում են սեպածն ուրվագիծ: Սրանք կարող են կապված լինել քաղաքամերձ անտառների հետ: Նման կառուցվածքով անտառաշերտերը նպաստում են մաքուր օդի ներթափանցմանը դեպի քաղաքի կենտրոն:

Գյումրիում մոտավորապես նման կառուցվածքի անտառային գոտիներ կարելի է ստեղծել Չերքեզի և Գյումրիչայի ձորակներում: Վերջինս ըստ մեզ, քաղաքի բնական միջավայրի բարելավման ամենամեծ և ամենաբարդ ծրագիրը կարող է լինել: Այս կանաչ գոտին կարող է սկսվել Քուրախյան փողոցի կամրջակից և տարածվել դեպի արևմուտք մինչև Չորի Բողազ քաղամասը՝ «Կոմայրի» պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանի սահմանը: Այս նպատակի համար անհրաժեշտ կլինի ձորակից դուրս բերել բնակչությանը՝ նրան տրամադրելով նոր բնակարաններ քաղաքի տարբեր մասերում: Որից հետո սկսել ձորակի կանաչապատումը և նրա վերածումը հանգստի գոտու: Սրանով կարելի է լուծել նաև Գյումրիգետի մաքրման հարցը: Ձորակում կարելի է կառուցել նաև փոքր լճակների կասկադ: Այս տարածքը կարող է ունենալ ավելի քան 20հա մակերես, որը Գյումրու չափերի համեմատ զգալի կանաչ զանգված է:

Նմանատիպ վերակառուցումներ կարելի է անել նաև «Վան» ռեստորանի տարածքի նախկին պուրակի տեղում, որը զբաղեցնում էր 6 հա մակերես, ինչպես նաև Բարեկամության և Կոմերիտմիության զբոսայգիներում:

Մյուս կարևոր հարցը քաղաքի կանաչապատման գործում, բուսատեսակների ճիշտ ընտրությունն է: Ծառաթփուտային բուսականությունը կարող է հանդես բերել տարբեր

վերաբերմունք վնասակար միացությունների նկատմամբ: Ըստ ուսումնասիրությունների, առավել մեծ կլանողականություն ունի բալզամային բարդին (*Populus balsamifera*): Կլանողական լավ հատկություններ ունեն նաև մանրատերև լորենին (*Tilia cordata*), հալեհին (*Fraxinus excelsior*), յասամանը (*Syringa vulgaris*), կովկասյան ցախակեռասը (*Lonicera caucasica*) և այլն:

Քաղաքային բնակավայրերի և մասնավորապես Գյումրու կանաչապատման համար, անհրաժեշտ է նկատի ունենալ վերոհիշյալ հանգամանքը:

Ըստ մեր իրականացրած ուսումնասիրությունների, ներկայումս Գյումրու տարածքում կանաչ տարածքների մակերեսը մի քանի անգամ քիչ է սահմանված նորմատիվային չափաքանակներից: Ընդ որում պահպանված կանաչ տարածքների վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բավականին ծեր են: Քաղաքում գոյություն ունեցող երկու խոշոր զանգվածներում՝ քաղաքային զբոսայգում և «Հաղթանակի պողոտա-Խաղաղության օղակ» պուրակում, ծառերի և թփերի տեսակային կազմը խիստ աղքատ է, իսկ վատ խնամքի պատճառով, դրանք գտնվում են ընկճված վիճակում:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ հետևողական աշխատանքի և ցանկության դեպքում Գյումրիում և նրա մերձակայքում կարելի է ստեղծել մինչև 300հա իսկական անտառային համակցված սաղարթով անտառներ, որը արմատապես կարող է փոխել քաղաքի բնական միջավայրը, Գյումրին դարձնելով նաև հանգստի կազմակերպման յուրահատուկ քաղաք:

Ստորև տալիս ենք Գյումրիում և նրա շրջակայքում անտառապատման համար նպատակահարմար տարածքների համառոտ ցուցակը.

1. Քաղաքային զբոսայգի (անտառային զանգվածի բարելավվում)
2. Մայր Հայաստան հուշահամալիր (անտառային զանգվածի ստեղծում)
3. Ախուրյանի հովիտ-Սևերսկի-Մարմաշենի վանք (ստեղծում)
4. Չերքեզի ձոր (բարելավվում)
5. Գյումրիգետի ձոր (ստեղծում)
6. Բարեկամության զբոսայգի (ստեղծում)
7. Կոմերիտականների զբոսայգի (ստեղծում)
8. «Վան» ռեստորանի տարածք (բարելավվում)
9. Գյումրուց դուրս եկող ավտոխճուղիների անտառաշերտեր(ստեղծում)
10. Սելեկցիոն կայանի դաշտապաշտպան անտառաշերտեր(ստեղծում)

### ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՄՄԻԿ ՌԻՍԿԸ

Առաջին անգամ փորձ է արվել գնահատել Գյումրի քաղաքի տարածքի սեյսմիկ ռիսկը, այսինքն ուժեղ երկրաշարժի դեպքում հնարավոր էական նյութական ու մարդկային կորուստները: Այս նպատակով օգտագործվել են քաղաքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը, ըստ որի վտանգը կազմում է 8-ից մինչև 9 ու ավելի բալ, կառուցապատման առանձնահատկությունների, երկրաբանական պայմանների վերաբերյալ և բազմաթիվ այլ տվյալներ: Բավական մանրամասն ուսումնասիրվել է քաղաքում տարածված շենքերի տիպերը, գնահատվել է դրանց խոցելիությունը, որի ժամանակ հաշվի է առնվել նաև Սպիտակի 1988թ. երկրաշարժի ժամանակ շենքերի դիմակայելու հատկությունները:

Քաղաքում առավել տարածված են շենքերի հետևյալ տիպերը.

1. Մեկ-երկու հարկանի քարե տներ՝ կառուցված մինչև Սպիտակի երկրաշարժը, որոնք երկրաշարժից ստացել են առաջին-երկրորդ աստիճանի վնասվածքներ: Սրանց հասակը մինչև 100 և ավելի տարի է: Այս շենքերում բետոն և ամրաններ չեն օգտագործված: Եթե դրանք գտնվում են 9 և ավելի բալականության վտանգի գոտում, մենք դիտարկել ենք, որպես միջինից բարձր ավերման ռիսկ ունեցող շենքեր: Այն շենքերը, որոնք գտնվում են միջև 9 բալ վտանգի գոտում, ունեն ավերման միջին սեյսմիկ ռիսկ:
2. Երեք-հինգ հարկանի քարե, աղյուսե միաձույլ բետոնից շենքեր, որոնք կառուցվել են Սպիտակի երկրաշարժից հետո և ունեն 9 բալ հաշվարկային սեյսմակայունություն: Սրանց կառուցման որակը բավականին բարձր է և կասկած չկա, որ սեյսմակայուն են: Այսպիսի շենքերով են կառուցապատված Գյումրու նոր միկրոշրջանները և հին քաղաքի ոչ մեծ տարածք զբաղեցնող փոքրիկ թաղամասերը:
3. Մինչև 5 հարկանի, հիմնականում քարե շենքեր, որոնք Սպիտակի երկրաշարժից ստացել են երրորդ աստիճանի վնասվածքներ և այսօրվա վիճակով ուժեղացված ու ամրացված են: Նրանց սեյսմակայունությունը կազմում է 9 բալ: Շենքերը գտնվում են քաղաքի տարբեր մասերում և մեծ տարածքներ չեն զբաղեցնում:
4. Մեկ-երկու հարկանի մետաղյա կարկասով և թեթև նյութերով կառուցված շենքեր, որոնց թիվը մեծ չէ: Միայն Ավստրիական գյուղում է, որ սրանք ունեն կուտակում:
5. Վեց-ինը հարկանի խոշորապանել բնակելի շենքեր, որոնք հիմնականում գտնվում են Բուվարային կոչվող թաղամասում և լավ են դիմացել Սպիտակի երկրաշարժի հարվածներին: Սակայն այս շենքերը 50% են բնակեցված և այս շենքերում չի պահպանվում շահագործման կանոնները, որի հետևանքով բավական մեծ վնաս է հասել նրանց սեյսմակայունությանը: Այս շենքերով կառուցապատված թաղամասի սեյսմիկ ռիսկը գնահատվում է միջին և միջինից բարձր:
6. Առողջապահական և կրթական ոլորտների օբյեկտների շենքերը հիմնականում կառուցված կամ ուժեղացված են Սպիտակի երկրաշարժից հետո և ունեն բարձր սեյսմակայունություն:
7. Մեկ-երկու հարկանի անհատական նախագծերով կառուցված բնակելի շենքերը և սպասարկման օբյեկտները ունեն բարձր սեյսմակայունություն և կառուցված են Սպիտակի երկրաշարժից հետո սեյսմիկ վտանգի նոր բարձր մակարդակի հաշվարկմամբ: Այս շենքերում լայնորեն օգտագործված են երկաթբետոնյա տարրերը:
8. Երեքից-հինգ հարկանի բնակելի թվով 88 բնակելի շենքեր, որոնք Սպիտակի երկրաշարժից ստացել են երրորդ, երրորդ-չորրորդ աստիճանի վնասվածքներ, ունեն բարձր սեյսմիկ խոցելիություն: Դրանք սփռված են քաղաքի տարածքով մեկ և միասնական մեծ մակերես չեն կազմում: Ուստի քաղաքի տարածքի ավերման սեյսմիկ ռիսկը հաշվելիս, այս շենքերը չեն դիտարկվել, սակայն դրանք հաշվառվել են մարդկային կորուստները գնահատելիս:

Արդյունաբերական օբյեկտների շենքերը հիմնականում գտնվում են վատթար վիճակում ինչպես Սպիտակի երկրաշարժի պատճառով, այնպես էլ անուշադրության հետևանքով, քանի որ գործարաններն ու ֆաբրիկաները հիմնականում չեն աշխատում: Նրանց սեյսմիկ խոցելիությունը մեծ է, իսկ ռիսկը՝ բարձր:

Ելնելով վերը շարադրվածից և շենքերի սեյսմիկ խոցելիության մեր տված գնահատականներից՝ կազմված է Գյումրու տարածքի շենքերի ավերման սեյսմիկ ռիսկի քարտեզ (նկ. 1):

Հնարավոր մարդկային կորուստները հաշվելիս հենվել ենք ինչպես շենքերի ավերման ռիսկի տվյալների, խոցելի շենքերում գտնվող մարդկանց քանակի, այնպես էլ Սպիտակի 1988թ.

երկրաշարժի ժամանակ մարդկային կորուստների վիճակագրական տվյալների վրա: Հնարավոր գոհերը ու վիրավորները 9 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում, կլինեն՝

ա) թվով 88 բազմաբնակարան, երրորդ և բարձր աստիճանի վթարայնություն ունեցող շենքերում, ուր բնակարանների թիվը կազմում է 1920, իսկ բնակչների թիվը՝ 7460 մարդ,

բ) ինը հարկանի խոշորապանել երեք շենքերում,

գ) մեկ-երկու հարկանի քարե շենքերում, որոնք ունեն երկրորդ-երրորդ աստիճանի վթարայնություն և գտնվում են բարձր սեյսմիկ վտանգի գոտում,

դ) այն շենքերում, որոնց մասին մենք տեղեկատվություն չունենք (կարող են լինել տարբեր տիպի շենքեր, որոնց շինարարության որակը ցածր է և շահագործման ժամանակ բարձրացել է շենքերի խոցելիությունը):

Ցերեկային ժամերին երկրաշարժի դեպքում ավերված շենքի մեկ բնակարանում, ըստ Սպիտակի 1988թ. երկրաշարժի վիճակագրության, հնարավոր է 1,2 գոհ: Գլխերային ժամերին գոհերի թիվը կարող է աճել, հասնելով ավերված մեկ բնակարանում մինչև 2-3 մարդ: Ըստ այդ նույն վիճակագրության, վիրավորների թիվը, որոնք կարիք ունեն բժշկական միջամտության, կազմում են գոհերի թիվը բազմապատկած 1,3 գործակցով: Եթե հաշվի առնենք վերը նշվածը, ապա մեր հաշվարկած գոհերի և վիրավորների թիվը տվյալ վայրում հնարավոր առավելագույն ուժի երկրաշարժի դեպքում, համեմատած Հայաստանի Հանրապետության մյուս քաղաքների հետ, կլինի փոքր, քանի որ Գյումրի քաղաքում շենքերի ավերման ռիսկը բավականին ցածր է:

Գյումրու համար շատ կարևոր է հրդեհների առաջացման ռիսկի գնահատումը, հատկապես ձմռանը, քանի որ հրդեհի տեսակետից խոցելի բնակարաններում (հիմնականում ժամանակավոր կացարաններում) օգտագործում են անհատական ջեռուցիչներ (էլեկտրական սալիկներ, կարծր ու հեղուկ վառելիքի վառարաններ, գազ), որոնք ուժեղ ցնցումներ ժամանակ կարող են հանդիսանալ հրդեհների առաջացման օջախներ:

Սպիտակի երկրաշարժից հետո Գյումրում տեղադրվեցին մոտ 30000 ժամանակավոր կացարաններ: Դրանց զգալի մասը կենտրոնացված են, այսպես կոչված, տնակային թաղամասերում: Դժբախտաբար, այստեղ տնակները տեղադրելիս շատ անգամ հաշվի չեն առնվել հակահրդեհային և հակահամաճարակային կանոնները, և այդ թաղամասերը ունեն մեծ ռիսկ վերը նշված տեսակետներից: Տնակների դասավորություն հաճախ այնպիսին է, որ նույնիսկ հրշեջ մեքենաները չեն կարող մոտենալ այրվող տնակներին: Այսօրվա դրությամբ տնակների մեծ մասը ապամոնտաժված է և կան դեռևս մոտ 7500 ժամանակավոր կացարաններ: Դրանց զգալի մասը գտնվում են տնակային թաղամասերում: Փորձ է արվել կազմել Գյումրու տարածքի հրդեհների առաջացման վտանգի քարտեզը 9 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում, որը ներկայացված է նկ. 2-ում: Քաղաքի տարածքը բաժանված է ռիսկի երեք բարձր, միջին և ռիսկի բացակայության գոտիների: Ինչպես արդեն նշել ենք, բարձր ռիսկի գոտիները հիմնականում ներակայացված են տնակային թաղամասերով:

Նորակառույց թաղամասերում (Անի, Մուշ և այլն) սեյսմիկ ռիսկը գործնականում բացակայում է: Խոսքը վերաբերվում է թե ավերման, թե մարդկային կորուստների և թե հրդեհների ռիսկին:

Կազմված ռիսկի քարտեզները կարող են օգտագործվել Գյումրու գլխավոր հատակագիծը ճշտելիս, կառուցապատման ռազմավարությունը մշակելիս, նոր շինարարություն իրականացնելիս, անշարժ գույքի արժեքները որոշելիս, ապահովագրական աշխատանքներ իրականացնելիս:

## Ջրադվածության հիմնահարցերի արդիականությունը և արդյունաբերության զարգացման հնարավոր ուղղությունները Գյումրիում

Ջրադվածությունը մարդկանց աշխատանքով ապահովելու և աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների միջև ձևավորված հարաբերությունների համակարգն է: Տարբեր տարիքային հասակի բնակչության ֆունկցիոնալ կառուցվածքը նույնը չէ և այն բաժանվում է աշխատունակ տարիքից ցածր, աշխատունակ տարիքի և կենսաթոշակառուների խմբերի: Սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, ռազմա-քաղաքական և այլ գործոնների ազդեցությունից փոխվում է բնակչության տարիքային կազմը:

XX դ. վերջին և XXI դ. սկզբին Հայաստանի հանրապետության, հատկապես Գյումրի քաղաքի բնակչության տարիքային կազմը մեծ փոփոխության է ենթարկվել: Այսպես, 1989թ. ԽՍՀՄ վերջին մարդահամարի տվյալներով<sup>1</sup> Գյումրու մշտական բնակչության թվակազմում (178.3 հազ. մարդ) աշխատունակ տարիքից ցածր բնակչության տեսակարար թիվը կազմել է 29.1, աշխատունակ տարիք ունեցողներինը 62.0, կենսաթոշակային տարիքի մարդիկ 8.9% էին կազմում: ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների քաղաքի բնակչության տարիքային խմբերի նույն ցուցանիշները կազմել են 24.8, 64.7 և 10.5%: Բերված թվերից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում քաղաքի մշտական բնակչության կազմում գրանցվել է աշխատունակ տարիքից ցածր մարդկանց տեսակարար կշռի նվազում, իսկ հաջորդ երկու տարիքային խմբերում աճ: Դա բացատրվում է հիմնականում 1990-ական թվականներին քաղաքի բնակչության ծնունդների թվի՝ գրեթե երեք անգամ նվազումով: Չնայած աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշռի աճին, նրանց արտագաղթի ծավալները մեծ են եղել: Այդ տարիներին հանրապետությունում, մասնավորապես քաղաքում ստեղծված իրապայմանները տեղաշարժում են բոլոր այն գյումրեցիներին, ովքեր այլ երկրներում հաց վաստակելու և ընտանիքը պատասպարելու թեկուզ չնչին հույս էին տածում կամ նույնիսկ այդ հույսն էլ չուեին:

<sup>1</sup> 1989թ. մարդահամարը հանրապետությունում, հատկապես աղետի գոտում անցակացվել է բավականին բարդ պայմաններում: Տարբեր աղբյուրներում ներկայացված տվյալները ժողովրդագրական իրականության հետ գրեթե կապ չունեն: Գյումրու բնակչության թվաքանակը ներկայացվում է տարբեր թվերով. մի դեպքում 120 հազար, մեկ այլ տեղ 160 հազար մարդ: Մեզ համար ընդունելի է մարդահամարի կողմից ներկայացվող թիվը՝ 178.3 հազ. մարդ:

Մեր հաշվարկներով 1991-1996թթ. Գյումրիի բնակչության բացասական մնացորդը կազմել է շուրջ 70 հազ. մարդ [1, էջ 165], իսկ հանրապետությունում, ըստ Վ. Խոջաբեկյանի հաշվարկի՝ 1 մլն. մարդ [2, էջ 14]: Որպեսզի հստակ պատկերացնենք, թե վերջին քսան տարիներին ինչ չափով է նվազել Գյումրու բնակչությունը, համեմատենք Անդրկովկասի մի քանի քաղաքային բնակավայրերի բնակչության թվաքանակի շարժընթացի փոփոխության հետ: Այսպես, նախքան Առաջին աշխարհամարտը տարածաշրջանի քաղաքներից Գյումրին ունեցել է 51.3 հազ. բնակիչ, Գանձակը՝ 56.3 հազ., Քութայիսը՝ 57.9 հազ. մարդ [3, էջ 29-30]: 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժից առաջ Գյումրին ունեցել է 228 հազ., Գանձակը՝ 270 հազ., Քութայիսին՝ 220 հազ. և Սումգայիթը՝ 234 հազ. բնակիչ [4, թ. 36-41]: 2003թ. համապատասխանաբար Գյումրու բնակչության թիվը կազմել է 149.5 հազ. մարդ [5, էջ 288]: Գանձակ քաղաքը 1997թ. ունեցել է 297 հազ. բնակիչ [6] և հաշվի առնելով բնակչության աճի տեմպերը այդ քաղաքի բնակչության թիվը մեր հաշվարկով 2003թ. կկազմի շուրջ 305 հազ. մարդ: Իսկ Քութայիս քաղաքը 2003թ. ունեցել է 255.4 հազ. բնակիչ [7]: Բերված թվերն ասում են այն մասին, որ եթե Գանձակ և Քութայիս քաղաքներում բնակչության թվաքանակն աճել է ժողովրդագրական բնականոն զարգացման պայմաններում, ապա Գյումրիում այն խախտվել է: Գյումրու բնակչության թվաքանակի շեշտակի նվազումը ուսումնասիրվող ժամանակահատվածում պայմանավորված է եղել ոչ այնքան 1988թ. աղետալի երկրաշարժից մարդկային կորուստներով, որքան 1990-ական թվականներից սկսված և մինչև օրս շարունակվող բնակչության արտագաղթով:

Գյումրիում բնակչության արտագաղթի բարձր ցուցանիշները բացատրվում է ոչ միայն աշխատատեղերի բացակայությամբ, այլև աշխատուժի առարջարկի ու պահանջարկի անհամամասնությամբ և աշխատանքի ցածր արժեքով: 1992-1997թթ. թվականներից Գյումրի քաղաքից բնակչության զանգվածային արտագաղթի պայմաններում, թվում էր, թե

գործազուրկների թիվը պետք է նվազի, իսկ իրականում այն ավելացավ: 1992թ. Գյումրիում գործազուրկի կարգավիճակ ունեին 4.0 հազ., 1997թ.՝ 37.0 հազ. մարդ [8, էջ 158]: 1999-2006թթ. ընկած ժամանակահատվածում Գյումրիում գործազուրկների թվի նվազումը տեղի չի ունեցել աշխատատեղերի ավելացման հաշվին: Այսպես, 1999թ. քաղաքում գործազուրկի կարգավիճակ ունեցողների թիվը կազմել է 29.2 հազ. [9, էջ 17], 2003թ.՝ 23.6 հազ. և 2006թ.՝ 17.9 հազ. մարդ[10]: Ասենք որ Շիրակի մարզի գործազուրկության հիմնական մասը բաժին է ընկել Գյումրի քաղաքին: 1996թ. մարզի գործազուրկի կարգավիճակ ունեցողների 93.8%-ը բաժին է ընկել Գյումրուն, 1999թ.՝ համապատասխանաբար 91%, 2003թ.՝ 89.7% և 2006թ.՝ 92.2%: Գյումրիում գրեցված գործազուրկների մեջ մեծ տոկոս են կազմում կանայք: Քաղաքում գործազուրկությունը նվազեցնելու և աշխատատեղեր ստեղծելու ժամկետները վճռականորեն կախված են իշխանությունների կողմից տնտեսական քաղաքականության ընտրությունից: Հայտնի է, որ աշխատանքի շուկայում պետությունը իրականացնում է պասիվ և ակտիվ քաղաքականություն: Փորձը ցույց տվեց, որ վերջին 15 տարիներին հանրապետությունում, հատկապես Գյումրի քաղաքում պետության պասսիվ սոցիալ-տնտեսական քաղաքականությունը միայն թուլացրեց սոցիալական լարվածությունը և ոչնչով չնպաստեց արտագաղթի ծավալների նվազմանը, այլ ընդհակառակը ինչ որ տեղ նպաստեց արտագաղթին: Կարծում ենք պետության կողմից իրականացվող պասսիվ ժողովրդագրական և տնտեսական քաղաքականությունը շարունակելու դեպքում մոտակա 10-15 տարիների ընթացքում Գյումրու բնակչության թիվը կնվազի ևս 45-50հազ. մարդով և 2020թ. բացառված չէ որ քաղաքի բնակչության թիվը կազմի 95-100 հազ. մարդ: Իսկ, տարեկան 500-1000 աշխատատեղ բացելու դեպքում, մեր հաշվարկով Գյումրին 15 տարի անց կունենա 210-215 հազ. բնակիչ:

Աշխատուժի պահանջարկի չափերի մեծությունը որոշելու համար ելակետային տվյալ է հասարակական արտադրությունում զբաղվածների, ինչպես նաև առկա ազատ աշխատատեղերի թիվը: 1988-2001թթ. Գյումրիում գրացվել է հասարակական արտադրությունում, մասնավորապես նյութական ոլորտում գրանցվել է աշխատողների թվաքանակի նվազում: Այսպես 1988թ. քաղաքի նյութական ոլորտում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ և կապ) զբաղվածների թիվը կազմել է 50 հազ., 2001թ.՝ 5.8 հազ. մարդ: Այսինքն այդ տարիներին քաղաքի նյութական ոլորտում աշխատողների թիվը պակասել է 8,6 անգամ: Իսկ ամենաշատը պակասել է արդյունաբերությունում զբաղվածների թիվը: 1988թ. քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը կազմել է շուրջ 37.5, 2001թ.՝ 2.9 հազ. մարդ : Զբաղվածների թվաքանակը շարժընթացը ոչ նյութական ոլորտում (հասարակական սնունդ, առողջապահություն, կրթություն, պետական կառավարում, կոմունալ տնտեսություն) նշված ժամանակահատվածում քիչ է փոփոխվել: Այսպես, 1988թ. այդ ոլորտում զբաղվածների թիվը կազմել է 20.2 հազ, իսկ 2001թ.՝ 14.9 հազ. մարդ [10]: Սակայն ուսումնասիրվող ժամանակահատվածում քաղաքի 1000 բնակչի հաշվով ոչ նյութական ոլորտի աշխատողների թվի աճ է գրանցվել՝ օրինակ 1988թ. Գյումրիում 1000 բնակչի հաշվով ոչ նյութական ոլորտում աշխատողների թիվը կազմել է 88, 2001թ.՝ 97 մարդ:

Այժմ հանրապետության կենտրոնական և մարզային իշխանությունների առաջնահերթ խնդիրն է վերաբացել կամ բացել Գյումրու արդյունաբերական այն ձեռնարկությունները, որոնց թողարկած արտադրանքը պահանջարկ ունեն ներքին և արտաքին շուկաներում, իսկ արդյունաբերության մեջ աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար պահանջվում է.

1. Ապահովել քաղաքի արդյունաբերության ճյուղերի տեխնիկական վերազինումը, պետական երաշխավորված վարկերի հաշվին:
2. Աղքատության և սոցիալական նպաստների հատկացվող գումարների մի մասը ուղղել դեպի արդյունաբերական ձեռնարկություններ, մասնավորապես աշխատատեղերի ստեղծելու ուղղությամբ:
3. Գրամաշնորհներ հատկացնել այն կազմակերպություններին ու մասնագետներին, որոնք կկազմեն իրատեսական ծրագրեր արդյունաբերության տարածքային կազմակերպման, կառավարման և արտադրված ապրանքների իրացման ուղղություններով:
4. Զարգացնել քաղաքի արդյունաբերության այն ճյուղերը, որոնց աշխատանքը հիմնված կլինի Շիրակի և Ջավախքի հանքային ռեսուրսների շահագործման վրա:
5. Երկարատև կապիտալ ներդրումներ անել արդյունաբերության այն ճյուղերում, որոնք մասնագիտացված են մեքենաշինական սարքավորումների ու ռադիոդետալների արտադրության մեջ:

## CULTURAL TOURISM

"The power of an integrated regional approach to preserving historic places and telling the story of a way of life has led to the success and growth of heritage areas across the country." ... Heritage areas "offer a uniquely holistic approach to preservation that seeks to encompass not just the buildings that identify and enrich a place but also the living culture of the people who call the place home."

*Richard Moe, President National Trust for Historic Preservation*

"Heritage areas are dynamic regional initiatives that build connections between people, their place, and their history. These connections are strengthened by capturing and telling the stories of the people and their place. These stories, when linked together, reflect a regional identity and support a collective awareness of the need to protect and enhance what makes our places unique. ... The most successful heritage areas ... are much more than tourist destinations. They are the expression of the people who live, work, and shape the land. Their stories are rich and diverse. They provide a bridge connecting the past to the present and people to their place."

*Jayne Daly, Glynwood Center*

Heritage areas "harness a wide range of community assets and interests--from historic preservation, outdoor recreation, museums, performing arts, folk life and crafts and scenic and working landscapes, to grassroots community-building activities--that when combined create a sum greater than its parts."

□ *August Carlino, president and CEO of the Rivers of Steel National Heritage Area*

### Questions:

- What are the advantages/disadvantages of creating a Heritage corridor between Yerevan and Gyumri?
- What are the factors that create a cohesive Heritage Corridor between Yerevan and Gyumri? (history, geology, economy, ecology, etc.)
- What is the nature of the shared culture?
- What are the boundaries for the Heritage Corridor? (Shirak Marz)
- What are the major communities?
- What is the level of community support, citizen engagement, financial commitment in any given town/community?
- What are the "historical memories" that are etched into the national/regional/local consciousness? (genocide, literary/musical icons, historic educational institutions, scenic roadways, nationally/internationally historic figures and cultural icons)
- What are the natural resources? (see resource map V)
- What are the towns and communities that have retained much of their historic character? Historic town centers, neighborhoods, architecture? (see resource map II.A)
- How is heritage conserved on a regional scale?
- How can it be developed in an appropriate fashion to facilitate broad economic growth?

### Notes:

- Rural character can be a major asset: lack of generic development, heritage resources that are intact, communities and countryside free of sprawl, legacy of poverty that has retarded aggressive growth within a region can become a major asset when considered in the context of limited development, a rich heritage can provide a community with a solid foundation upon which to base an aggressive program of tourism-focused infrastructural investment and resource enhancement)
- Major obstacles: 1) resources threatened by lack of funding, uncontrolled development, neglect, or a combination thereof, 2) communities lack financial and technical means to provide adequate protection for its range of resources, 3) collective cultural, historic and natural heritage possesses great potential for economic diversification but there are considerable obstacles to effective conservation and development
- much heritage needs to be protected, enhanced, and promoted but are expensive tasks

- potential thematic tours: while much of a region's rich and diverse cultural heritage is of national significance, no single aspect is inherently more deserving of attention than the others – therefore, the interpretive and promotional strategies of the heritage area will not utilize or feature one dominant theme, but will employ a series of primary and secondary themes, tours, and trails, to facilitate a compelling exploration of the region's heritage and culture

## ԳՅՈՒՄՐՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Գյումրի բնակավայրը գրավոր աղբյուրներում հիշատակվում է հնագույն ժամանակներից (մ.թ.ա. 8-րդ դար) Կումայրի, որը դարերի ընթացքում հնչյունական փոփոխությունների ենթարկվելով դարձել է Կումերի –Կումիրի: Վերջինս էլ, ավելի աղավաղվելով, ստացել է Գումրի, իսկ որոշ ժամանակ էլ անց՝ Գյումրի: Հնագետները ենթադրում են, որ ոչ միայն Շիրակ տեղանունը այլև Կումայրին առնչվում է կիմերական էթնիկական անվան հետ:

Գյումրին ՀՀ երկրորդ քաղաքն է Շիրակի մարզի, նրա վարչական, կազմակերպիչ-համախմբող կենտրոնը: Խորհրդային տարիներին Հայաստանը բաժանված էր շրջանների, իսկ այժմ մարզերի (10+1), որոնցում գտնվում են քաղաքային, գյուղական համայնքները (930): Եթե մարզերում իրականացվում է պետական կառավարումը, ապա տեղական ինքնակառավարումը համայնքներում:

Տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) ծավալում են բնակչության բարեկեցության բարելավմանը և համայնքային սեփականության տնօրինմանն ուղղված ինքնուրույն օրինական գործունեություն: Սրանք նպաստում են հասարակական կյանքի ապաստանականացմանը (այսինքն պետության գործառույթները տրվում են համայնքներին), ժողովրդավարացմանը՝ բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի ինքնուրույն լուծման իրավունքի ապահովմանը: ՈՒստի Տիմ-երը երկրի կառավարմանը քաղաքացիների մասնակցության արդյունավետ ձևերն են: Կառավարման այդ կառույցները հաջողությամբ գործում են եվրոպական երկրներում:

Խորհրդային Հայաստանում չկար Տիմ-եր, այլ գործում էին տեղական խորհուրդները՝ սովետները, որոնք գրկված էին ծավալելու ինքնուրույն գործունեություն:

Տիմ-երը նպաստում են նոր քաղաքացիական, ինքնակառավարվող հասարակության ձևավորմանը: Այժմ քաղաքակիրթ երկրներում ձևավորվել է քաղաքացիական հասարակության որոշակի նախատիպ, որի շնորհիվ պետական կամայականություններից զգալիորեն մեծացել է քաղաքացիների պաշտպանվածությունը, նրանց ինքնուրույն ազատ գործունեությունը:

Տեղական ինքնակառավարման օղակ է Գյումրու քաղաքային համայնքը, որի հետ մեր աշակերտների ծանոթացումը, սկսած տարրական դասարաններից, մեծացնում է պատասխանատվության զգացումը և համակրանքը հարազատ քաղաքի նկատմամբ՝ ուր բնակվում և սովորում են:


Գյումրին ունի քաղաքային համայնքի կարգավիճակ: Քաղաքը գտնվում է ՀՀ պետական սահմաններից ոչ հեռու Շիրակի դաշտում, Ախուրյանի վտակ Գյումրի գետի ափին: Այստեղ 2001 թ. տվյալներով բնակվում են ավելի քան 140 հազար մարդ (մշտական բնակչությանը շուրջ 151 հազար), մինչև երկրաշարժյան աղետը 230 հազար բնակիչ, իսկ 2006 թ.՝ 149.300 մարդ:

Գյումրու համայնքի ղեկավարը՝ քաղաքապետը և համայնքի ավագանին ընտրվում են համայնքում ապրող բնակիչների կողմից 4 տարի ժամկետով: Տեղական ընտրությունների ժամանակ ընտրակեղծիքները համեմատաբար ավելի նվազ են, և ընտրողներն ավելի ազատ են արտահայտում իրենց կամքը, քանզի այլընտրանքային թեկնածուների առկայության դեպքում ուժեղանում է վերահսկողությունը:

Քաղաքապետը ինքնուրույն է կատարում կադրերի ընտրությունը՝ ձևավորում է իր աշխատակազմը, ինչպես նաև իր ներկայացմամբ և ավագնու համաձայնությամբ նշանակում է համայնքի հիմնարկների ղեկավարներին:

Համայնքի ղեկավարը իրականացնում է գործադիր(կառավարման), իսկ ավագանին՝ ներկայացուցչական (որոշումների կայացման) գործառույթներ:

Գյումրու տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն հետևյալ կառուցվածքը (տես՝ աղյուսակ 1)



Գյումրու ՏԻՄ-երը զբաղվում են քաղաքացիների և գործարարների իրավունքների պաշտպանության, ֆինանսների բաշխման, կոմունալ տնտեսության և բարեկարգման, քաղաքաշինական և հողօգտագործման, հասարակական տրանսպորտի, առևտրի և այլ հարցերով:

Համայնքն իր ուշադրության կենտրոնում է պահում քաղաքի մշակույթի, սպորտի և կրթության զարգացման հարցերը: Մեր երգի, պարի խմբերը, մարզիկները, գրողները հայտնի են ոչ միայն հանրապետությունում, այլև աշխարհում:

Քաղաքապետարանը շատ է կարևորում երեխաների նախակրթության կազմակերպումն ու նրանց իրավունքների պաշտպանությունը:

Գյումրու ՏԻՄ-երի խնդիրներն էլ ավելի են բարդացել 1988թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժի հասցրած հետևանքների պատճառով: Դրանք են՝ մոտ 15 հազար մարդկանց անդառնալի կորուստը, բնակարանների շուրջ 70% և արդյունաբերական ձեռնարկությունների 60% ավերումը: Այսօր համայնքում դեռ կան վթարային, կիսակառույց շենքեր, տնակներում ապրող անօթևաններ, գործազուրկներ, սոցիալապես անապահով ընտանիքներ, արտագաղթողներ և այլն: Համայնքում աճել է բնակչության մահացությունը և նվազել երեխաների ծնելիությունը:

Գյումրու համայնքի աշխարհագրական դիրքը ևս բարենպաստ չէ նրա հեռանկարային զարգացման համար: Ի նկատի պետք է ունենանք, Գյումրի քաղաքի հեռու լինելը ծովերից և համընդգրկուն շրջափակումը Ադրբեջանի կողմից: Այնուհետև, մեծ դժվարությամբ են բեռնափոխադրումները կատարվում հարևան երկրներից:

ՏԻՄ-երը պետական կառավարման մարմիններ չեն, սակայն պետությունը նրանց վերահսկում և պատվիրում է որոշ լիազորությունների իրականացում:

Սահմանադրությամբ նախատեսվում է համայնքի լիազորությունների մեծացում, ուստի հարկ կա այսօր հստակեցնել մարզպետարանի և քաղաքապետարանի, անհատի և համայնքի փոխհարաբերություններում բազմաթիվ գործառույթներ և վիճահարույց հարցեր: Անհիմն է համայնքի բնակարանների բաշխման գործը տալ Շիրակի մարզի մարզպետարանին, վերջինիս ենթակայության տակ են գտնվում նաև համայնքի հանրակրթական դպրոցները:

Համայնքը չունի իր մունիցիպալ (տեղական) ոստիկանությունը, որը արդյունավետորեն կապահովեր քաղաքի բնակչության անվտանգությունը և կպաշտպաներ մեր հոգևոր ժառանգությունը, հատկապես հուշակոթողները: Այդ առումով հիշատակության է արժանի Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի փորձը:

Գյումրու տեղական ինքնակառավարման իրավասությունների մեջ արժևորվում է էթնիկական խմբերի կայուն զարգացման երաշխիքների ստեղծումը, որը կբացառի նրանց օտարումը համայնքից, ազգայնական դրսևորումները և «սեգրեգացիան» (խտրականությունը):

Էթնիկական փոքրամասնությունների ընդգրկումը քաղաքի տնտեսական, մշակութային կյանքին կխորացնի այլազգիների և սփյուռքի (մայր հայրենիքի) միջև կապերը:

ՏԻՄ-երը համարվում են ժողովրդավարությունն զարգացնելու կարևոր ոլորտ: Նրանք միջնորդ կապող օղակ են ժողովրդի և վերադաս (բարձրագույն) իշխանությունների միջև, ուստի ժողովրդավարացումը անհրաժեշտ է իրականացնել ներքևից: Չէ որ տեղական ինքնակառավարումը դիտվում է որպես ժողովրդի իշխանության իրացման կարևորագույն ձև:

## **Ֆիզիկական դաստիարակությունը Ալեքսանդրապոլում (1918-1923 թթ.)**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմության վերաբերյալ մեր ուսումնասիրությունները բացահայտում են որ Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920), ինչպես նաև խորհրդային կարգերի հաստատման (1920 - 1923թթ.) ժամանակահատվածում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմության բազմաթիվ հանգուցահարցեր դեռևս պատշաճ մակարդակի չեն ուսումնասիրվել, չեն վերլուծվել կամ էլ ներկայացվել են միակողմանի և խեղաթյուրված:

Օգտագործվել են բազմաթիվ արխիվային նյութեր, որոնց շնորհիվ ի հայտ են բերվել ֆիզկուլտուրայի և սպորտի բազմաթիվ երախտավորների, որոնք մոռացության էին մատնվել և որոնց տքնաջան աշխատանքով սկզբանավորվեց մարզական կյանքը Հայաստանում և մասնավորապես Ալեքսանդրապոլում:

Ուսումնասիրությունները մեծամասամբ հիմնված են արխիվային նյութերի վրա: Աղբյուրագիտական հիմքը այն փաստաթղթերն են, որոնք հավաքել ենք ՀՀ պետական կենտրոնական արխիվից:

Բացի վերոհիշյալից, օգտագործել ենք նաև հարցազրույցներ Վահան Չերազի դուստր Բյուրակն Անդրեասյանի, Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցների նաղկին սկաուտներ՝ վարորդ Սիոն Խաչատրյանի, փոստատար Հայկ Մարտիրոսյանի, թոշակառուներ Նազար Գալստյանի, Տոնիկ Հովհաննիսյանի ,հանրապետության վաստակավոր մարզիչ Բաղդասար Մովսիսյանի . Հանրապետության վաստակավոր ուսուցիչ Յուլալ Հայկազյանի, նաղբին “Բագե” մարմնամարզական ընկերության անդամներ Արտավազ Սանոյանի, բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Գուրգեն Մինասյանի, զինվորական բժիշկ փոխգնդապետ Գուրգեն Փարսադանյանի, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Հայկ Մարտիրոսյանի, Կարո Չիլինգարյանի, Հրաչ Բաբայանի հետ: Արխիվային նյութերի և ականատեսների վկայությամբ հենց այդ ծանր ու հայ ժողովրդի համար դժվարին տարիներին կառավարությունը, մասնավորապես նրա կրթության և ռազմական նախարարությունները, մշակել և ծրագրավորել, իսկ հետագայում իրականացրել են զգալի աշխատանքներ ֆիզիկական կուլտուրան զարգացնելու ուղղությամբ:

1918թ. մայիսի 28-ին շուրջ 600 տարվա ընդհատումից հետո ,միջազգային և ներքին բարդ իրադրության պայմաններում վերականգնվեց հայկական պետությունը և հռչակվեց **ՀՀ** –ը:

1915թ. մեծ եղեռնից մազապուրծ հայ ժողովուրդը, որը կենաց ու մահու պայքար էր մղում իր գոյությունը մի փոքրիկ հողակտորի վրա պահպանելու համար,առաջին հերթին իր ողջ ուժերը նպատակամղեց կանոնավոր ազգային բանակ ,ուսումնական ,մշակութային և մարզական օջախներ ստեղծելու վեհ գործին:

Այս ոգով էին տոգորված Հայաստանի առաջին հանրապետության պետական ղեկի մոտ կանգնած քաղաքական գործիչները, Ալեքսանդր Խատիսյանը, Սիմոն Վռացյանը, Նիկոլ Աղբալյանը, Վահան Արծրունին, Արամ Մանուկյանը, Հովհաննես Հախվերդյանը, Կարո Սասունին և այլոք:

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին, ինչպես նաև դրանից հետո մինչև 1923թ. ֆիզկուլտուրային մարզական շարժման գորցընթածը, քաղաքական նկատառումներից ելնելով, խորհրդային իշխանության տարիներին ընդհանրապես չի ուսումնասիրվել: Ի դեպ, հայ ժողովրդի պատմության ոչ մի ժամանակաշրջան անցած 70

տարիների ընթացքում խորհրդահայ պատմագրության կողմից այնքան անխիղճ կերպով, գիտակցաբար չի աղավաղվել, որքան Հայաստանի առաջին հանրապետության պատմության կարճ ժամանակահատվածը: Փաստերը խեղաթյուրվել են, ներկայացվել այնպես, իբր թե երկրում 1918-1920թթ. ամերիկյան որբանոցներում մինչև 1923թ. ստեղծվել էր դաշնակցական դիկտատուրա, թե այդպիսի կառավարությունը չէր կարող լուծել ժողովրդի շահերից բխող որևէ կենսական հարց, թե հակաժողովրդական բնույթ էր կրում նրա վարած և ներքին և արտաքին քաղաքականությունը: Գրում են որ, 1918-1920թթ. Հայաստանում մարում էր ժողովրդական կրթության և լուսավորության գործը, որ կործանման վտանգի տակ էր հայոց դարավոր մշակույթը:

Իրականում ճշմարիտ պատկերն այլ էր: Նորաստեղծ հանրապետության կառավարությունը իր գործունեության առաջին իսկ օրվանից կենսական այլ հարցերի կողքին ուշադրության կենտրոնում էր պահում նաև հայ մշակույթի խնդիրները: Հանրապետության գոյության երկուսուկես կարճ տարիների ընթացքում Հայաստանում բացվեցին բազմաթիվ գիմնազիաներ, պետական համալսարան, մարզական ընկերություններ և ակումբներ:

1918-1920թթ. Հայաստանը փորձում էր գտնել իր ինքնահաստատման ուրույն եղանակը: Այդ գործընթացը շարունակվեց նույնիսկ վարչակարգի փոփոխությունից հետո, և նաղկին կառավարության կողմից ստեղծված մարզական և մշակութային բազմաթիվ կազմակերպություններ իրենց գործունեությունը շարունակեցին մինչև 1923թ, երբ կառավարության հրահանգով կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ, և հնում եղած բոլոր կազմակերպությունները արգելվեցին: Նոր սոցիալիստական գաղափարախոսությունը չէր ընդունում իրենց արդարացրած և փորձության անցած այդ կազմակերպությունների գոյությունը: Այդպիսիները շուտով լուծարվեցին, իսկ նրանց կազմակերպիչները հետագայում հետապնդումների ենթակվեցին, բանտարկվեցին, արքայազնները կամ գնդակահարվեցին: Բայց և այնպես, ինչպես առաջին հանրապետության, այնպես է խորհրդային Հայաստանի կառավարությունները մեծ ուշադրություն են դարձրել կրթական, մշակութային, մարզական համակարգի խնդիրներին: Այս առումով 2 շրջանին էլ, 1918-1920, 1920-1923 թթ. բնորոշ է երեխաների կրթության և դաստիարակության, այդ թվում նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգի ընտրության հարցը:

Վերոհիշյալ խնդիրների լուծման մեջ իր ուրույն տեղն ունի սկաուտական շարժման փորձը Հայաստանում, ինչպես նաև չեխական “Բազե” մարմնամարզական ընկերության կազմակերպվում է և հիմնավորումը Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանում: 1918թ-ից Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանում Մարտին Մարգարյանի ջանքերով կազմակերպվում է “Բազե” մարմնամարզական ընկերությունը:

Մարտին Մարգարյանը Պետերբուրգի համալսարանում ուսումնառության տարիներին 1912-1918 թթ, դառնում է ռուսական “Սոկոլ” ընկերության անդամ, խորությամբ ծանոթանում է չեխական մարմնամարզությանը: Ավարտելով Պետերբուրգի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը, գործուղվում է Ալեքսանդրապոլ և մաթեմատիկա դասավանդում տեղի առևտրական ուսումնարանում: Նրա համառ ջանքերով մարմնամարզական գոծիքներով կահավորվում է ուսումնարանի մարզադահլիճը, որը փաստորեն առաջինն էր Հայաստանի հանրապետությունում: Նա ակտիվորեն ձեռնամուխ է լինում ընկերության անդամներին սոկոլյան մարմնամարզության ուսուցանելուն: Այդ ընկերության մեջ հիմնականում ընդգրկվում են առևտրական ուսումնարանի մոտավորապես 100 սաներ: Ընկերությունը իր գոյությունը շարունակում է մինչև 1923թ, որից հետո լուծարվում է:

19-րդ դարի 60-ական թթ. հայտնի դարձավ Չեխիայում ծագած սոկոլյան շարժումը: Այդ տարիներին մի քանի սլավոն ոչ մեծ ժողովուրդներ Ավստրո - Հունգարական կայսրության կազմի մեջ էին և ենթարկվում էին ազգային ճնշման, միաժամանակ պայքարելով ազատագրման համար: Ամենամեծ ակտիվությունը այս շարժման մեջ ցուցաբերեցին չեխերը: Այդ շարժման ղեկավարները իրենց առաջ նպատակ էին դրել

միավորելու սլավոն ժողովուրդներին և պատրաստվելու ազգային-ազատագրական պայքարի:

Այսպես ծնվում է մի կազմակերպություն, որը ստանում է “Սոկոլ” անվանումը: Այն խորհրդանշում էր ազատություն, խիզախություն և համարձակություն: Սոկոլյան կազմակերպությունները մեծ դեր են խաղում նաև ժողովրդի կուլտուր-լուսավորական գաղափարների տարածման գործում, բարձրացնում էին չեխ ժողովրդի ազգային ոգին, օժանդակում էին ժողովրդի միավորմանը ,միաժամանակ իրականացնելով ազգի ֆիզիկական պատրաստվածության գործը:

Սոկոլյան շարժման տարածումը կապված է Միրոսլավ Տիրշի(1832-1884)անվան հետ:1862թ. Տիրշը սոկոլյան մարմնամարզության գաղափարները տպագրեց <<Սոկոլ>> թերթերում՝ <<Մեր խնդիրները, ճանապարհը և նպատակը>> խորագրի տակ: Նրա ծրագրի էությունը կայանում էր նրանում,որ փոքր ազգությունները և ժողովուրդները կարող են դառնալ ամբողջ մարդկության լիիրավ անդամը միայն ներքին համախմբվածության շնորհիվ,երբ ամբողջ ազգը միավորվում է ընդհանուր նպատակների շուրջ: Մինևույն ժամանակ նա գտնում էր, որ ուսուցման և դաստիարակության գործում գլխավոր շեշտը պետք է դրվի ազգային սկզբունքների վրա: Տիրշը ձգտում էր մարմնամարզության շարժումներին տալ այնպիսի ձևեր, որոնք մարզիկների և հանդիսականների մոտ կառաջացնեն հոգեկան վերելք, ուրախության զգացում և գեղագիտական հագեցվածություն: Սոկոլյան գաղափարները շուտով տարածվեցին Չեխիայի սահմաններից դուրս: Սոկոլյան կազմակերպություններում մեծ ուշադրություն էր դարձվում հայրենասիրական և բարոյական դաստիարակությանը: Ուշադրություն էր դարձվում օրգանիզմի կոփմանը ,սանիտարա-հիգիենիկ գիտելիքների տիրապետմանը, ուժի, դիմացկունության և ճարպկության զարգացմանը: Բազմաթիվ կազմակերպչական –մեթոդական դրույթներ, որոնք օգտագործվում էին սոկոլյան մարմնամարզության մեջ ներկայումս ընկած են ժամանակակից սպորտային մարմնամարզության հիմքում:

Սոկոլյան շարժումն ու մարմնամարզությունը նախ ներթափանցեց Ռուսաստան 1911 թ., իսկ այնուհետև 1916 թ. Անդրկովկաս, Թիֆլիս, ապա 1918թ. Ալեքսանդրապոլ: Ինչպես վկայում են նախքին բազեականներ Հայկ և Գուրգեն Փարսադյան եղբայրները, Արտավազդ Սանոյանը, Գուրգեն Մինասյանը, Հայկ Մարգարյանը Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանում պարապմունքները սկսվել էին խմբին մարզիչ-ուսուցչի ողջույնից հետո: Խումբը միշտ հագնում էր գեղեցիկ, մաքուր սպորտային համազգեստ, յուրաքանչյուր անդամ կրում էր բազեի փետուրով գլխարկ: Ողջույնից հետո նրանք երգում էին հայրենասիրական երգեր,ապա սկսում պարապունքը: Կատարում էին ազատ վարժություններ, հետո բաժանվելով ենթա խմբերի, կատարում էին վարժություններ գործիքների վրա հաջորդաբար հերթականությամբ փոխելով դրանք: Սրան հետևում էին “բուրգերի” կառուցում, իսկ պարապունքը վերջանում էր շարային պատրաստակամությամբ: Ալեքսանդրապոլի “Բազե” մարմնամարզական ընկերությունը ունեցել է 3 բաժանմունք .

1. Մարմնամարզություն, որը ղեկավարել են Մարտին Մարգարյանը, ապա Գերասիմ Զուրաբովը, հետո Վարդան Ղասաբյանը
2. ֆուտբոլի,որը ղեկավարել է Գուրգեն Աթարյանը – Սիբիրյակ մականունով
3. Ծանրամարտի, որը ղեկավարել է Բաբկեն Մալույանը :.....

## Հասմիկ Հարությունյան

արվեստագիտության թեկնածու

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն  
Երևանի Կոմիտասի անվ. պետ կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

### ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ

XIX դարի վերջին Ալեքսանդրապոլն ուներ ինքնատիպ քաղաքային երաժշտական մթնոլորտ, որտեղ գերիշխում էր ժողովրդապարտֆեսիոնալ արվեստն իր բազմապիսի դրսևորումներով: Սազանդարների ու այլ նվագածուների անսամբլներում, մերձավորարևելյան տիպի երաժշտամտածողության ու բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտության հիմքի վրա ներդաշնակորեն զարգանում էր տեղական ուրույն նկարագրով մի երգարվեստ, որը զարմանալի ձգողական ուժով իրեն էր ենթարկում շնորհաշատ կատարողներին՝ ապահովելով լիարժեք դրսևորվելու բոլոր անհրաժեշտ պայմանները: Հայկական նոր աշուղական դպրոցի ծնունդը դրա վառ ապացույցն ու հետագա ձեռքբերումների գրավականն էր: Քաղաքային հասարակական կյանքում /սրճարաններ, ընտանեկան ու ընկերական հաճախակի հավաքույթներ, տոնախմբություններ, բացօթյա համերգներ, հյուրախաղեր, մրցույթներ և այլն/ առկա էին երգ-երաժշտության գեղագիտական չափանիշները և դասական մուշուկների կենսական պահանջ կար:

Այս մթնոլորտում առաջին հայացքից շատ պարզ ու սովորական է ներկայանում Գրիգոր Տալյանի մուտքն Ալեքսպոլի երաժշտական կյանք. հասարակ հյուսնը տուրք տալով երաժշտական հակումներին, սկզբում սազ ու թառ է պատրաստում, հետո արհեստանոցը վերածում է յուրահատուկ համերգարահի՝ ավանդական մրցույթներ ու նոր երգեր ներկայացնելու համար: Ապա՝ փորձությունը դարաբաղցի Ջումշուղի սազանդարական խմբում, համերգային շրջագայություններ և շուտով նրան ճանաչում են որպես՝ **աշուղ Շերամ**: Մինչդեռ նրա երգարվեստը բացառիկ կարևոր արժեք ունի: Հայ աշուղական արվեստում Շերամը մի նոր հուն բացեց՝ հրաժարվելով սեփական բանաստեղծական հորինումները աշուղական կաղապար-մեղեդիներին ենթարկելուց: Արդյո՞ք դա աշուղի մախասիրությունն էր, թե՞ կար դրան նպաստող այլ գործոն: Մենք խորապես համոզված ենք, որ վերջինս Ալեքսանդրապոլի գերհագեցած երգաստեղծ մթնոլորտն էր, որը յուրովի բացահայտեց ու բոցավառեց Շերամի անզուգական մեղեդիաստեղծ հանճարը:

Երբ 1800թ. Ալ.Մխիթարյանը հրատարակեց Շերամի «Պարտեզում վարդեր բացված» երգը, վերջինս արդեն ծիսականացվել էր քաղաքային հարսանիքներում: Ավելին. մեր դիտարկումները ցույց տվեցին, որ 1915թ. ապաքինման նպատակով Թիֆլիսում բնակություն հաստատած աշուղն արդեն ստեղծել էր իր բոլոր հանրահայտ երգերը:

Առայսօր Շերամի երգերի մեծ ժողովրդականությունը վկայում է այն մասին, որ դրանց հորինվածքային առանձնահատկությունները խորապես խարսխված են ազգային մոնոդիկ երաժշտամտածողության սկզբունքների վրա: Ավելին. դրանք դիտելի են հայ միջնադարյան տաղերգության ծիրի մեջ՝ հանկարծաստեղծ վիպականությամբ ու շքեղաշուք մեղեդիական կերտվածքով և հատկապես նվագարանային արտահայտչամիջոցների՝ ճոխ զարդեկեջների ազատ կիրառմամբ:

Շերամի երգարվեստն Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթից ժառանգված չլիսամրող արժեք է, որի ավանդական անխաբար նկարագրի պահպանումը մերօրյա կարևորագույն մշակութային խնդիրների համալիրում է:

## Ս. ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Գյումրու Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոցն ազգային մշակույթի այն հազվագյուտ օջախներից է, որի դերն ու նշանակությունը բացահայտ էր իր սկզբնավորման հենց առաջին օրվանից (1921թ.): Մինչ այդ Գյումրին վաղուց արդեն ուներ կայուն ու ամուր ձևավորված մշակութային ավանդույթներ: Երգը, երաժշտությունը, թատրոնը ներկայացնում էին քաղաքի կյանքի բնական ընթացքը, նրա առօրյան: Նկարչական դպրոցի ստեղծումը երկար սպասված, բայց և օրինաչափ երևույթ էր, և այն չընկալվեց որպես զուտ քաղաքի զարգացման ցուցիչ: Գյումրին, դեռ չբժշկված իր մարմնական ու հոգեկան, սոցիալական ու տնտեսական վերքերը (1915թ. հետո), երազում էր ապագայի մասին:

Այս առումով անչափ նշանակալի էր նկարչական դպրոցի դերը: Դպրոցն իր գոյության հենց առաջին տարիներից տվեց այնպիսի դեմքեր, որոնք իրենց ստեղծագործությամբ զարգացրին ու հարստացրին հայ կերպարվեստը: Մերկուրովի դպրոցի շրջանավարտների հետագա գործունեությունը կերպարվեստի զարգացման գործում այնքան ծանրակշիռ է, որ արժանի է ուշադրության:

Անցյալ դարի 60-90-ական թթ. գեղարվեստական որոնումների հորձանուտում էլ հայտնվեց գյումրեցի նկարիչների մի ամբողջ սերունդ: Նրանցից շատերին վիճակված էր դառնալ գեղարվեստական նոր ուղղությունների ու ոճերի հիմնադիրը կամ առաջամարտիկը: Այս սերնդի նկարիչների մեջ իր վառ անհատականությամբ առանձնանում է Հ. Անանիկյանը, որի ավանդն անգնահատելի է ոչ միայն որպես մանկավարժի, այլև որպես ինքնատիպ գեղանկարչի:

Բայց Հ.Անանիկյանի մեծագույն հայտնագործությունը, բառի իսկական իմաստով, Մ. Ավետիսյանն էր: Նրա մարգարեական օրհնությամբ Մինասը մտավ արվեստի աշխարհ, մտավ հաստատաքայլ, տիրական, շռայլ ու պերճագեղ, օրինաչափ ու տրամաբանական, որպեսզի ավետեր հետսարյանական հայ նորագույն գեղանկարչության ծնունդը: Դա պահանջված հայտնություն էր:

Ազգային գեղանկարչության համար Մինասի գունային աշխարհն արժեքավոր էր նրանով, որ ավերում էր նրա ահագնացող անդեմությունը: Հայտնի է, որ տեսողական իրողության և տեսողության իրականացման ակտի միջև կա միջամտող գործողություն, որն անվանում ենք մեկնաբանական, և այս տեսողական ընկալման մեկնաբանման հանճարեղ նորության մեջ է Մինասի արվեստի հզորությունը:

Անցյալ դարի 70-80-ական թթ. չկար ոչ մի քիչ թե շատ նշանավոր նկարիչ, որն ինչ-որ չափով ազդված չլիներ Մինասի ստեղծագործությունից: Նկարչի հարթած ճանապարհով, իհարկե, նրան ոչ համաքայլ, ընթացան նաև նրա համերկրացի սերնդակիցները՝ Ա. Մելքոնյանը, Ա. Հովհաննիսյանը, Ռ. Աթոյանը, Հ. Մինասյանը: Գեղարվեստական ուղղությունների ու ոճերի խայտաբղետ հորձանուտում նրանք գտան արվեստի իրենց օրգանական ձևը: Նրանք հայտնվել էին տենդագին յուրացման գործընթացում և փորձում էին մոտենալ ազգային ինքնուրույնությանը՝ վերադարձնել իրենց երբեմնի ազատությունը և զարգացնել ժամանակի նկարչության հիմնական միտումները:

60-80-ական թվականների գյումրեցի նկարիչների ավագ սերնդի վերոհիշյալ ներկայացուցիչները վառ անհատականություններ էին և իրենց ստեղծագործություններով թարմ շունչ ու նոր որակ հաղորդեցին հայ կերպարվեստին թե՛ ոճական, թե՛ թեմատիկ առումով՝ շատ բանով ուղղորդելով նրա հետագա տարիների զարգացումը:

## ԱՐԴԻ ԷԹՆՈՂՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ

Հետադետյան ժամանակաշրջանում մարդկային հոգեկան ապրումների վերարտադրությունը բացառիկ տեղեկատվություն է ազգի գենոֆոնդի և նրա ինքնապաշտպանական մեխանիզմների մասին: Անցումային այս փուլում մենք կարևորել ենք ստրեսի սոցիալ-հոգեբանական քննությունը ազգաբնակչության հոգեկան առողջության պահպանման և հոգեկան հիգիենայի ապահովման համար:

Շիրակի մարզի, մասնավորապես Գյումրու ազգաբնակչության անապահով շերտի հիմնախնդիրներին առնչվող տվյալների բազայի ստեղծում:

Վերակազմավորված ընտանիքների հետ հոգեբանական աշխատանքի իրականացում՝ ապահովելով նրանց հարմարման գործընթացը:

Ստրես տարած անձնաց հատուկ տեղեկատվության հավաքագրում՝ էքստրեմալ իրավիճակներում փոխհատուցման մեխանիզմների ապահովման նպատակով:

Սոցիալ-հոգեբանական հարցումների միջոցով բացահայտել տարածաշրջանի սովորութամշակութային կենցաղի առանձնահատկությունները:

Անցման փուլում անձի սոցիալական բնավորության և վարքագծի մասնահատկությունները:

Հատուկ կարիքով անձանց մտավոր ներուժի հաշվառում և օգտագործում:

Հատուկ կարիքով անձանց հոգեբանական աղապատացիան (հարմարումը) և ինտեգրումը հասարակության հետ:

Ուսումնասիրել հայ մենտալիտետի էթնոմշակութային առանձնահատկությունները:

Միջմշակութային ուսումնասիրություն և կառավարում:

Շիրակի մարզում առկա սոցիալ-հոգեբանական կարևորագույն հիմնախնդիրների բացահայտում և համայնքի զարգացման հեռանկարներին առնչվող ծրագրերի առաջադրում:

Սոցիալ-հոգեբանական վերլուծություններ և հետազոտություններ Շիրակի մարզում ստրեսային վիճակների հետևանքների մասին:

Մասնագիտական քննարկումներ միջազգային մակարդակով:

Տարածաշրջանի սովորութամշակութային կենցաղի առանձնահատկությունների ուսումնասիրում, անձի սոցիալական բնավորության և վարքագծի ձևավորման ապահովում հետստրեսային ժամանակահատվածում:

Հայ մենտալիտետի դրսևորումների ուսումնասիրում ստրեսային իրավիճակներից հետո:

Շիրակի մարզի ազգաբնակչության, մասնավորապես երեխաների հոգեբանական անվտանգության ապահովում:

Սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների մտավոր պոտենցիալի առանձնահատկությունները, ներգրավում գործնական կյանքի ոլորտ:

Երեխաների հոգեկան առողջության պահպանման տեսափորձարարական հետազոտություններ:

Խաթարված մանկություն ունեցող երեխաների ընտանիքների սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն:

Ընդհանրացնել առ այսօր հրատարակված բոլոր նյութերը ստրեսային իրավիճակների ինտեգրացման մասին՝ շեշտադրելով հիմնական կորուստների ու ձեռքբերումների իրողությունները:

Էթնոպաշտպան հոգեբանական մեխանիզմներ և բարդույթներ:

Էթնիկական (ազգային) սիմվոլներ և հոգեկերտվածք: Ազգային սիմվոլների տեսակները: Դրական և բացասական սիմվոլներ: Էթնոտարբերիչ նշաններ:

Էթնիկական ստերեոտիպեր և նախապաշարումներ: Դրանց ստեղծման մեխանիզմները և ձեռքբերման ուղիները: Էթնիկական ստերեոտիպերի պաշտպանական գործառույթները: Էթնոսի բնավորությունը:

Էթնիկական առանձին գծեր ու բարդույթներ:

Ազգային բնավորության հասունության չափանիշները: Հիմնական անձի և մոդալ անձի պատկերացումների համադրման խնդիրը:

**ԳՅՈՒՄԻ ԲԱՂԱՔՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄԻՑ ՓՐԿԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հայ մեծ նկարիչ Մինաս Ավետիսյանի լավագույն գործերից են հանդիսանում Գյումրի քաղաքի տարբեր հիմնարկ ձեռնարկություններում պահպանված որմնանկարները, որոնք ստեղծվել են 1970-1974 թվականներին, այսինքն՝ նրա ստեղծագործական վերելքի տարիներին: Դրանց քանակը բավականին մեծ է, սակայն երկու խոշոր իրադարձությունները պատճառ հանդիսացան որմնանկարների մի մասի ոչնչացման, իսկ մյուս մասի վիճակի վատթարացման:

ա/ 1988թ.-ի Սպիտակի ուժեղ երկրաշարժը, որի հետևանքով փլուզվեցին կամ դարձան վթարային այն շենքերը, որոնցում գտնվում էին որմնանկարները;

բ/ Հիմնարկ ձեռնարկությունների շենքերի մասնավորեցումը, երբ առանց հաշվի առնելու որմնանկարների գոյությունը և արժեքը, վաճառվեցին անհատներին կամ բաժնետիրական ընկերություններին:

Այսօրվա դրությամբ որմնանկարներից մի քանիսը երկրաշարժի հետևանքով շենքերի փլուզման պատճառով անդարձ կորած են, իսկ մյուս մասի վիճակը ուղակի աղետալի է: Աղյուսակում բերված են Մինաս Ավետիսյանի Շիրակի մարզի տարբեր բնակավայրերում ստեղծված որմնանկարների ցուցակը, նրանց վիճակի պայմանական գնահատմամբ: Վստահությամբ կարելի է ասել, որ կործանումից փրկվել է և լավագույն վիճակում է գտնվում միայն “Անալիտիկ սարք” գործարանից բուլղարացի մասնագետների օգնությամբ հանված և Գյումրու Պետական թատրոնի շենքում հավաքված “Աղբյուրի մոտ” որմնանկարը: Համեմատաբար լավ վիճակում է գտնվում Ազատանի մշակույթի տան “Լեռներում” որմնանկարը, որը կարիք ունի միայն մասնակի վերականգնման: Աղետալի վիճակում են գտնվում Վահրամաբերդի մշակույթի տան “Հայաստան” որմնանկարը, որի շենքը փլուզվել է 1988թ.-ի երկրաշարժից ու այսօր պահպանված է միայն շենքի այն պատը, որի վրա գտնվում է որմնանկարը, ինչպես նաև Գյումրու “Էլեկտրասարք” և “Գալվանոմետրերի” գործարանների որմնանկարները: “Էլեկտրասարք” գործարանում գտնվում են Մինասի 4 որմնանկարները (“Թորոս Ռոսլինի ծնունդը”, “Երկանք”, “Գորգ են գործում”, “Խաչքարի մոտ”), որի երկհարկանի շենքը տուժել է երկրաշարժից, բայց որմնանկարների պահպանվածության համեմատաբար լավ է: Երկրաշարժից փլուզվել է շենքի մի հատվածը (բարեբախտաբար ոչ այն հատվածը, որտեղ գտնվում են որմնանկարները), իսկ ողջ շենքը գտնվում է վթարային վիճակում: Գործարանի ղեկավարությունը գիտակցելով որմնանկարների բարձր արժեքը, քայլեր է արել դրանք ոչնչացումից փրկելու համար և դա տվել է իր դրական արդյունքը: Այսօր փակ են դեպի որմնանկարներ տանող շենքի դռները և դժվար է թափանցել շենքի երկրորդ հարկ, ուր գտնվում են որմնանկարները: Շենքի երկայնական պատը, որի վրա գտնվում են որմնանկարները, մասնակի տուժել է երկրաշարժից: Այսպես, պատում առաջացել են ճաքեր, թափվել է որոշ որմնանկարների վերևի անկյունների ծեփը, գունաթափվել են նրանց որոշ մասերը: Սակայն որմնանկարները հիմնականում պահպանված են: Եթե արագ կարգով չձեռնարկվեն միջոցներ որմնանկարները տեղափոխելու կամ շենքը ամրացնելու ու վերականգնելու ուղղությամբ, ապա որմնանկարների ոչնչացումը մոտ ժամանակների հարց է, քանի որ տեղումների ջուրը արդեն քայքայված տանիքից իջնում և հոսում է որմնանկարների վրայով: Պետք է նշել, որ Մինաս Ավետիսյանի որմնանկարների կողքին կա նաև Ռ. Աթոյանի բարձրարժեք որմնանկարը:

Առավել վատ վիճակում են գտնվում Գյումրու նախկին Գալվանոմետրերի գործարանի հիմնական մասնաշենքում գտնվող 3 որմնանկարները: Շենքը խիստ տուժել է երկրաշարժից, ստացել է 3-4-րդ աստիճանի վնասվածքներ, չկան դռները և պատուհանները: Այն սեփականաշնորհված է և փաստորեն գտնվում է անհսկելի վիճակում: Շենքի շքամուտքը, որտեղ գտնվում են որմնանկարները, վեր է ածվել է զուգարանի, ցանկացած մարդ կարող է մտնել և փչացնել որմնանկարները: Նույնիսկ մեկի խելքին փչել է կրակել հայտնիներից մեկի դիմանկարին: Ամենամեծ չափեր և արժեք ունեցող որմնանկարը “Հայաստանի լեռներում” որմնանկարն է: Այն տուժել է երկրաշարժի ցնցումներից, քանի որ որմնանկարի պատը անջատվել է շենքի կարկասից, տեղ տեղ թափվել է սվաղը, հատկապես պատի վերնամասում և հատակի մոտ գտնվող շրջանում: Այս կենտրոնական որմնանկարի աջ և ձախ կողմերում գտնվում են նաև երկու ոչ մեծ որմնանկարներ, մոտավորապես 1,5x3 մետր չափերով, որոնք փաստորեն ոչնչացված են:

Գյումրու նախկին “Ստրոմմաշինա” (ներկայիս “Բարհատմեքենա”)գործարանի ճաշարանի շենքում գտնվող Մինաս Ավետիսյանի երկու և Հակոբ Հակոբյանի որմնանկարների պահպանվածության վիճակը կարելի է համարել բավարար: Միայն թե մի որմնանկարի մեծ մասը, որը տեղադրված էր միջնորմի վրա, ապամոնտաժված է, և մեր ունեցած տեղեկություններով,

տեղափոխված է Երևան: Այսինքն հույս ունենաք, որ այն կորած չէ: Շենքը պատկանում է մասնավոր ընկերությանը և նրա հետագա ճակատագիրը անհայտ է: Որմնանկարները կարիք ունեն վերականգնման, սակայն առավել կարևոր է, որ որմնանկարները համարվեն պետական սեփականություն և պահպանվեն:

“Կայունություն և Առաջընթաց” ՀԿ-ն լուսանկարել է բոլոր որմնանկարները, մուտքագրել է համակարգիչ և ստեղծել է դրանց թվային 2 տիպի բազաներ:

1. Որմնանկարների և նրանց առանձին հատվածների լուսանկարների թվային բազաները այսօրվա դրությամբ, այսինքն ինչպես որ կա:
2. Որմնանկարների թվային բազաները , որոնք վերականգնվել են համակարգչային ծրագրերով: Մասնավորապես վերականգնվել են նրանց վնասված մասերը, վերացվել են ճաքերը:

Այսպիսով Գյումրի քաղաքում գտնվող Մինաս Ավետիսյանի որմնանկարները խիստ կարիք ունեն պետական հոգածության և վերականգնման, որի համար առաջարկվում են հետևյալ քայլերը.

- որմնանկարները դասել ազգային արժեքների շարքը և հանձնել պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների պահպանությանը,
- Գյումրու “Էլեկտրասարք” գործարանի ճաշարանում գտնվող որմնանկարները փրկելու համար անհրաժեշտ է կամ շենքը ամրացնել, այն հանձնելով Գյումրու քաղաքապետարանին դարձնելով մշակույթային օջախ, կամ որմնանկարները տեղափոխել այլ մի վայր,
- Գյումրու “Գավանոմետրերի” գործարանի “Հայաստանի լեռներում” որմնանկարը տեղափոխել այլ մի շենք,
- Գյումրու “Քարհատ” մեքենա գործարանի ճաշարանի շենքը հանձնել քաղաքապետարանին դարձնելով այն մշակույթի օջախ, կամ տեղափոխել որմնանկարները մի այլ տեղ:

Որմնանկարները տեղափոխելու համար առավել ընդունելի տարբերակն է Գյումրու նկարիչներից կամ վերականգնողներից ընտրել մի խումբ, որոնց ուսուցանել որմնանկարները պատից ծեփով անջատելու կամ պատը ամբողջությամբ մասնատելու և այլ մի տեղում հավաքելու տեխնոլոգիաներին: Հետագայում գտնել միջոցներ որմնանկարների տեղափոխման գործընթացը կազմակերպելու համար, նախորոք որոշելով այն մշակույթային օջախները, և միգուցե, պետական ուսումնական հաստատություններ, որտեղ պետք է վերջնական հանգրվան գտնեն դրանք (օրինակ նպատակահարմար է որմնանկարներից մեկը տեղափոխել Ջաջուռ գյուղի Մինասի տուն-թանգարան): Այս ճանապարհով իրականացված գործընթացները տնտեսապես ավելի շահավետ կլինեն:

Առավել մեծ միջոցներ կպահանջվեն, եթե ամրացվեն որմնանկարների շենքերը և վերականգնվեն որմնանկարները, դրանք դարձնելով մշակույթի օջախներ:

Վեր հանված հիմնախնդիրները պահանջում են լուրջ քննարկումներ ՀՀ Մշակույթի և Երիտասարդության նախարարության ու Գյումրու քաղաքապետարանի պատասխանատու պաշտոնյաների, մշակույթի ոլորտի մասնագետների, հասարակական կազմակերպությունների և մյուս բոլոր շահագրգիռ կողմերի ու անձանց մասնակցությամբ, որպեսզի ընդունվեն արագ ու ճիշտ որոշումներ:

## Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը

XIX դարի II կեսը հանդիսանում է հայ երաժշտության զարգացման նոր դարաշրջանը, երբ սոցիալական, տնտեսական և մշակութային տեղաշարժերը հիմք ստեղծեցին երաժշտարվեստի նոր ուղիների և ձևերի մշակման, գեղարվեստական մտածողության նորովի արժեքավորման համար:

Այդ ժամանակահատվածում սկիզբ դրվեց ժողովրդական ստեղծագործության բանահավաքչական գործընթացին, սկզբնավորվեցին ազգային կոմպոզիտորական դպրոցն ու դասական երաժշտարվեստը:

Ազգային արվեստի կազմավորման ընթացքը կապված էր մշակութային հայաշատ կենտրոնների հետ, որոնցից էին Թիֆլիսը, Մոսկվան, Պետերբուրգը, Կոնստանդինապոլիսը: Բուն Հայաստանում մասնավորապես ժողովրդական արվեստի զարգացման տեսակետից առանձնանում էին Ալեքսանդրապոլն ու Շուշին, որոնցում ավելի աշխույժ էր երաժշտական կյանքը:

«Գավառական Ալեքսպոլը ժամանակի հայկական քաղաքներից ամենաուրախն ու ամենազվարճասերն էր, հայտնի իր արվեստագետներով և արհեստավորներով», - գրում է Աղասի Սահակյանը:

XIX դարի 70- ական թվականներին աշուղ Ջիվանին երկրորդ անգամ է գալիս Ալեքսանդրապոլ, որտեղ 1872 թվականին ամուսնանում է սրճարանատեր Հովհաննես Տալայանի աղջկա՝ Աշխենի հետ և Ալեքսպոլը դառնում է նրա երկրորդ ծննդավայրը: Այդ տարիներին Ալեքսանդրապոլում էին նշանավոր աշուղներ Ջամալին Ֆիզային, Պայծառեն, Չահրին, Մահլուլը, Էհրաթն ու շատ ուրիշներ, որոնցից որոշակի գատվում է Ջիվանու աստիճանաբար հասունացող, ինքնատիպ քնարը:

Եթե մինչ 1871թ. Ջիվանին երգում է տարբեր խմբերի հետ, ապա շուտով նա կազմակերպում է իր երաժշտախումբը, որի համբավը տարածվում է Հայաստանում և սփյուռքում:

«Անհրաժեշտ նախապատրաստությունից հետո Ջիվանին ձեռնամուխ եղավ իր բազմաթիվ արհեստակիցներին մի կազմակերպության մեջ համախմբելու նրանց աշխատանքում մի որոշ կարգուկանոն մտացելու և գուսանական արվեստը որոշակի ուղղության վրա դնելու գործին», - գրում է Աղասի Սահակյանը: Ստեղծվում է 25 աշուղներից կազմված միություն և ինչպես երևում է նրանց ստորագրություններով հատատված վավերագրից, Ջիվանին միաձայն ընտրվում է վարպետների գլխավոր (Ուստաբաշի):

Ալեքսանդրապոլի և շրջական գյուղերի աշուղների համար, որոնց թիվն անցնում էր մի քանի տասնյակից, Ջիվանին կազմակերպեց աշուղական դպրոց, որն մեր բնահյուսության և աշուղական արվեստի պատմության մեջ հանդիսանում է աննախադեպ իրողություն:

Գպրոցում ուսուցանվում է աշուղական արվեստի տեխնիկան, երաժշտամասնագիտական և այլ գիտելիքների հետ սովորեցնում էր Ջիվանին «երգերը հայերեն հորինելու, սիրավեպերը մայրենի լեզվով պատմելու, հայերեն երգելու հմտությունները»:

Ջիվանին իր անձնական օրինակով, իր քնարական բանաստեղծությունների ու մյուս ստեղծագործությունների կատարմամբ, նույնը սովորեցնում ու պահանջում էր իր աշակերտներից:

«Բացի իր երգերից, - գրում է Գարեգին Լևոնյանը, - Ջիվանին երգում էր նաև այլ վարպետ աշուղների երգերը, երգում էր նույնպես Խ. Աբովյանից, Մ. Նալբանդյանից, Բաֆֆուց, Գամառ-Քաթիպայից, Հովհ. Թումանյանից, Ավ. Իսահակյանից: Նրա ռեպերտուարի մեջ էին նաև մի քանի կես աշուղական, կես ժողովրդական սիրված երգեր»:

Ջիվանին ջերմ սիրով կատարում և ուսուցանում է հայ ժողովրդական երգեր տարբեր աշուղների հանրահայտ ստեղծագործություններ, դրանով հարստացնում իր երգացանկը և իր աշակերտներին և ունկնդիրների երաժշտական մտահորիզոնը:

Ջիվանին աշուղական արվեստը բարձրացրեց մի նոր աստիճանի՝ ստեղծելով իր աշուղական դպրոցը, որն հայ բանագիտության մեջ իրավամբ կոչվում է ազգային դպրոց: Ջիվանին կատարելագործում է աշուղական երաժշտության ձևերը, խորացնում մեղեդու ընդունված իմպրովիզացիոն ոճը, հարստացնում աշուղական երգի ելևէջային կառուցվածքը բուն հայկական ժողովրդական, գեղջկական երաժշտության տարրերով և ստեղծում իր անհատական գրելաձևը, որում խոսքային և ոկալ- մեղեդային ինտոնացիաները միաձուլվում են:

Ջիվանին, ինչպես իր ժամանակի աշուղներից շատերը, գիտեր արևելյան մի քանի լեզուներ: Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը հայ աշուղները հիմնականում ստեղծագործում էին

օտար լեզուներով: Հատկապես աշուղական սիրավեպերը, որոնք տարածված էին մերձավոր արևելքի երկրներում պատմվում և երգվում էին թուրքերեն, տաճկերեն, պարսկերեն և այլ լեզուներով: Բազմադարյան պատմություն ունեցող հերոսական պատումների և սիրավեպերի գրական երաժշտական ժանրը կազմում էր աշուղների երկացանկի զարդը: Սիրավեպերը, հերոսական պատումները, առասպելական գրույցները ստեղծվել են դեռևս մինչուրարտական ժամանակներում, երբ սկզբնավորվում էր հայ երաժշտաբանաստեղծական հնագույն ձևերից մեկը՝ ասմունքելով և մեջընդմեջ երգելով պատմելը: Հայ պատմագրության մեջ Փավստոս Բյուզանդը այդ ժանրը անվանել է երգ վիպասանություն, Մովսես Խորենացին՝ «երգ վիպասանաց», «գրույց», երբեմն էլ «գուսանական»: Դրանցից մեզ հասած «Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին» առասպելը կարելի է համարել առաջին սիրավեպերից մեկը: Հելլենիստական Հայաստանում զարգանում է գուսանական արվեստը: Գուսանները, Խորենացու վկայությամբ, հնագույն անտարրանջատ արվեստի միջոցով՝ ասմունքելով մեջընդմեջ երգելով, պարի, դիմախաղի և լարային «փանդիո» գործիքի նվագակցությամբ կատարել են վիպերգեր, հեքիաթներ, առասպելներ և սիրո մասին պատմություններ: Չնայած անբարենպաստ քաղաքական և տնտեսական պայմաններին, հին և միջնադարյան Հայաստանում գուսանական արվեստը զարգանում է՝ կրելով արևելյան երաժշտության ազդեցությունը:

Ինքնուրույն պետականություն չունենալը և տարբեր ազգերի և ցեղերի կողմից նվաճվելը խանգարում են գուսանական երաժշտաարվեստի առաջընթացը և պարտադրում հայ աշուղներին ստեղծագործել արևելյան լեզուներով:

XVII- XVIII դարերի ընդհանուր արևելյան աշուղական արվեստը XIX դարասկզբում աչդեն աստիճանաբար իր տեղը զիջում է հայ ազգային աշուղական դպրոցին: Այլալեզու և գավառներում ծաղկող բարբառային աշուղական պոեզիան և օտար լեզվով ստեղծագործելու սովորույթը շահավետ էր, սակայն հայ աշուղները սկսած Ջիվանուց ստեղծագործում են մայրենի լեզվով:

XIX դարի երկրորդ կեսին աշուղական պոեզիան մտնում է իր զարգացման նոր փուլը որով սկսվում է հայերենի գերիշխանությունը աշուղական պոեզիայում, որը 70- 80- ական թվականներին Ջիվանու շնորհիվ հասնում է վերջնական հաղթանակի: Հայերեն են սկսում ստեղծագործել ոչ միայն Հայաստանի այլև սփյուռքի հայ աշուղները:

Ջիվանին և իր դպրոցի աշուղները հրաժարվում են թուրքերեն, ֆարսերեն և այլ լեզուներով ստեղծագործելուց և երգեր ու սիրավեպեր են գրում մայրենի լեզվով: Նրանք նախ նույնությամբ պահպանելով ժողովրդին սրտամոտ մեղեդիները, դրանց հայերեն բառեր հորինեցին: «Այստեղից պարզվեց,- գրում է Գարեգին Լևոնյանը,- որ ոչ թե համը թուրքերենի մեջն է, այլ եղանակների... ժողովուրդը տեսավ յուր մայրենի լեզվի քաղցրությունը, հարստությունը»:

Ջիվանին զգալով արևելյան հեքիաթների և սիրավեպերի հանդեպ ժողովրդի բուն հետաքրքրությունը 1887 թվականին թուրքերենից փոխադրում է «Աշղ Գարիբի» հեքիաթը: Ջիվանին չափավորում է առասպելներ, նախապաշարմունքներ պարունակող հատվածները, դրանց փոխարեն ավելացնելով մարդասիրական, բարոյական և խրատական բնույթի կտորներ: Նա մաքրում է մեղեդին արևելյան անտեղի գեղգեղանքներից և օտարամուտ դարձվածքներից, սիրավեպի մեջ մտցնում նոր մի քանի ինքնուրույն երգեր, որոնցից արժե հիշատակել «Եկա անցա քեզնից Արաքս, ինձ մի ճանապարհ տուր» ստեղծագործությունը: Ոգևորված «Աշղ Գարիբի» ջերմ ընդունելությունից Ջիվանին փոխադրում է «Ասի Բյարամ», «Շահ Իսմայիլ» և «Լեյլի Մեջմուն» սիրավեպերը: Սրանք նույնպես խմբագրելով, չափավորելով և ինքնուրույն նորաստեղծ երգեր ավելացնելով ընդգրկում է իր հարուստ երգացանկում: Կարճ ժամանակում նա գրում է «Արշալույս և Լուսաբերիկ», «Հմայակ և Արուսյակ» գուստ հայկական, ինքնատիպ սիրավեպերը, որոնք մեծ ժողովրդականություն և ընդունելություն գտան, սակայն մնացին անտիպ:

Մեծ ջանքեր և հարուստ տաղանդ էր անհրաժեշտ աշուղական դարերով ընդունված ավանդույթերը ժխտելու և ազգային նոր հայկական աշուղական դպրոց հիմնելու համար, որտեղ Ջիվանու օրինակով ստեղծագործում էին գրական հայերենով միաժամանակ պայքարելով գրաբառի բարբառային ոչ մաքուր գրելաձևի դեմ: Այդ բարդ ու դժվարին հիմնահարցի լուծմանը նպաստեց նաև Ջիվանու կողմից ղեկավարվող աշուղների միությունը: Այսպիսով Ջիվանին կարողացավ շարունակել և խորացնել Նադարշ Հովնաթանից սկիզբ առած և Սայաթ Նովայի կողմից զարգացրած ազգային երգարվեստի լավագույն ավանդույթները, որոնք հաջողությամբ իրագործեց իր կողմից հիմնադրված աշուղների միության և աշուղական դպրոցի շնորհիվ:

Ամփոփելով Ջիվանու աշուղական դպրոցին մվիրված զեկույցը անհրաժեշտ ենք համարում նշել, որ լուրջ ուսումնասիրության են արժանի Ջիվանու երաժշտամանկավարժական և աշուղական գործունեության հարուստ և ինքնատիպ, առաջավոր և ուսանելի փորձն ու ձեռքբերումները և այն ստեղծագործաբար կիրառել աճող սերնդի երաժշտագեղագիտական դաստիարակության բնագավառում: